Տպագրված է ընդամենը 3 օրինակ

Օրինակ 3

Կազմված է «08» հուլիսի 2018թ.
Հաստատված է «Միավորված հայեր»
կուսակցության հիմնադիր

համագումարում
«08» հուլիսի 2018թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Գրանցման ամսաթիվ 06.11.2018թ

Գրանցման համար 211.172.1044908

ՀՎՀՀ 01286729

Կուսակցության քաղաքական խորհրդի
նախագահ
ՊՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ք.ԵՐԵՎԱՆ – 2018թ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» կուսակցությունը՝ (հապավումը՝ ՄՀԿ), (այսուհետ՝ ՄՀԿ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

ՄՀԿ-ն քաղաքական նպատակներ հետապնդող, ՀՀ Սահմանադրության, օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերով և դրանց համապատասխան ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերի շրջանակներում գործող և Հանրապետության մտավորականության ինչպես նաև մյուս քաղաքացիների կամավոր քաղաքական միավորում է, որը հանդես է գալիս որպես ազգային-հայրենասիրական, կենտրոնածիգ, հզոր և կայուն պետականության կողմնակից , պետականամետ՝ երրորդ ուժ:

1.2.ՄՀԿ արտահայտում է հայ ժողովրդի հասարակական, քաղաքական և սոցիալ-իրավական շահերը: Նրա հիմնական արժեքներն են. ազգովի միասնությունն ու ազատությունը, սոցիալ-իրավական արդարությունը, համերաշխությունը և ազգային գաղափարախոսությունը:

1.3.ՄՀԿ գործունեությունը հիմնված է անդամության կամավորության, ինքնակառավարման, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, օրինականության և հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների հիման վրա:

1.4.ՄՀԿ ղեկավար մարմիններն ու նրա տարածքային ստորաբաժանումները կարող են գտնվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ պետություններում ՄՀԿ կարող է ունենալ միայն ներկայացուցչություններ:

1.5.ՄՀԿ-ն, համաձայն «Կուսակցությունների մասին» 16.12.2016 թ. ՀՀ սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի, օրենքով նախատեսված կարգով ենթակա է պետական գրանցման:

1.6. ՄՀԿ-ի հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար և վերահսկողություն

իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաև իր կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար):

Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադրի միաձայն որոշմամբ:

1.7.Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից ՄՀԿ-ն ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ, օգտվում է իրավաբանական անձի կարգավիճակից բխող օրենքով սահմանված իրավունքներից և կրում համապատասխան պարտականություններ:

1.8.ՄՀԿ հիմնադիրները նրա հիմնադիր համագումարի մասնակիցներն են, ովքեր պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են ՄՀԿ անդամներ:

1.9.ՄՀԿ չի քարոզում սահմանադրական կարգի բռնի տապալում կամ սահմանադրական կարգը տապալելու նպատակով բռնության կիրառում: Կուսակցությունը գործունեություն չի ծավալում և ստորաբաժանումներ չի տեղակայում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում, պետական այլ կազմակերպություններում:

2.ՄՀԿ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1.ՄՀԿ նպատակն է.

- Հայաստանում քաղաքացիական հասարակության և ժողովրդի իշխանության արմատավորման հիման վրա կերտել ճշմարիտ սոցիալ-իրավական և ժողովրդավարական պետություն, որտեղ կգործի իրավունքի գերակայությունը, ու բոլորը հավասար կլինեն օրենքի առջև, և որտեղ կպաշտպանվեն մարդու իրավունքները և ազատությունները: ՄՀԿ ձգտում է սոցիալական արդարության, արժանապատվության, օրինականության և բարոյականության համամարդկային արժեքներին համապատասխանող իրավական հասարակության հաստատման, որը կհանդիսանա ազգային միասնության ամուր երաշխիք:
- Մասնակցություն ունենալ հասարակության և պետության քաղաքական կյանքին, նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:
- հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

2.2.ՄՀԿ խնդիրներն են. նպաստել Հայաստանի պետականության ամրապնդմանը, տնտեսական, գիտական և հոգևոր նորուժի զորացմանը, ժողովրդի համակողմանի զարգացմանն ու բարգավաճմանը, քաղաքական կայունացմանը, քաղաքացիական հասարակության կառուցմանը, արտագաղթի կանխմանը, Հայրենիքի շուրջ հայության համախմբմանն ու հայրենադարձմանը, ՀՀ Սահմանադրության շրջանակներում ժողովրդավարական իշխանությունների կազմավորմանը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը և Հայ Դատի արդարացի լուծման, ազգամիջյան վեճերի խաղաղ լուծման աջակցմանը: Ժողովրդի առջև ծառացած համազգային հիմնահարցերը լուծելու նպատակով ՄՀԿ դաշինք է կազմում հասարակական և հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ:

3.ՄՀԿ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

3.1.ՄՀԿ անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ գործունակ յուրաքանչյուր քաղաքացի, ով ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, նպաստում կուսակցության նպատակների կենսագործմանը, մասնակցում է նրա կառույցներից մեկի աշխատանքին, մուծում անդամավճար:

3.2.ՄՀԿ անդամակցությունը կամավոր է և անհատական:

3.3.ՀՀ քաղաքացին կարող է միաժամանակ լինել միայն մեկ կուսակցության հիմնադիր:

Ծանոթություն.

1. ՄՀԿ անդամները, ովքեր ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, իրավունք չունեն իրենց ծառայողական /պաշտոնեական/դիրքն օգտագործել հօգուտ կուսակցության շահերի:

Նշված անձինք պաշտոնեական պարտականությունները կատարելիս կաշկանդված չեն կուսակցության որոշումներով:

2. Կուսակցության հիմնադիր անդամ չեն կարող լինել.

ա/ դատավորները,

բ/ դատախազները,

գ/ քննիչները:

3. Գործող օրենդրությանը համաձայն սահմանափակվել են անդամակցումը կուսակցությանը զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմինների ծառայողների անդամակցումը:

4. Իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում ՄՀԿ անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները:

3.4.ՄՀԿ անդամին տրվում է միասնական անդամատոմս:

3.5.ՄՀԿ անդամի ընդունելությունը կատարվում է սկզբնական կազմակերպության ժողովում՝ անդամագրվողի դիմումի համաձայն, ժողովի մասնակիցների ձայների պարզ

մեծամասնությամբ: Սկզբնական կազմակերպություն չունենալու դեպքում՝ տարածքային, մարզային կազմակերպության խորհրդի կամ վարչության որոշմամբ:

3.6.Ընդունելության մասին սկզբնական կազմակերպության ժողովի որոշումը հաստատվում է տարածքային, մարզային կազմակերպության խորհրդի կողմից:

3.7.ՄՀԿ անդամները, կուսակցության կանոնադրության պահանջներին համապատասխան ունեն իրավունքներ և պարտականություններ: Իրենց կանոնադրական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, կուսակցության անդամները կարող են սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ընդհուպ՝ կուսակցությունից հեռացման:

3.8.Կարգապահական պատասխանատվության ենթարկել կարող են .

- կուսակցության նախագահը,
- քաղաքական խորհուրդը,
- վարչությունը, մարզային, տարածքային և համայնքային կազմակերպությունների խորհուրդները,
- սկզբնական կազմակերպությունները:

3.9.Կարգապահական պատասխանատվության տեսակներն են.

- նկատողություն,
- խիստ նկատողություն,
- նկատողության կամ խիստ նկատողություն անձնական գործում գրանցելով,
- զրկումը կուսակցության կողմից շնորհված պատվավոր կոչումից,
- կուսակցության կազմում զբաղեցրած քաղաքական կամ ղեկավար պաշտոնից հեռացում կամ իջեցում,
- կուսակցությունից հեռացում:

3.10.Խրախուսանքի միջոցներն են.

- շնորհակալություն հայտնելը՝ բանավոր կամ գրավոր՝ անձնական գործում գրանցելով,
- արժեքավոր նվերով պարգևատրումը,
- կուսակցության պատվոգրով պարգևատրումը,
- կուսակցության դրոշի մոտ լուսանկարումը,
- նախկինում հայտարարված տույժի վաղակետ՝ մինչև մեկ տարին , հանումը:

3.11.Կուսակցական տույժերը քննարկվում և նշանակվում են կուսակցության անդամի մասնակցությամբ՝ նախապես անցկացված կուսակցական քննության նյութերով: Քննարկմանը չներկայանալու դեպքում կուսակցական մարմինն ընդունում է որոշում հարցը քննարկելու նրա բացակայությամբ:

3.12.ՄՀԿ անդամի համար ՄՀԿ անդամակցությունը դադարում է.

ա/ իր գրավոր դիմումի համաձայն կուսակցությունից դուրս գալու դեպքում,

բ/ նրա մահվան դեպքում,

գ/ կուսակցության լուծարման դեպքում,

դ/ գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

4.ՄՀԿ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՄՀԿ անդամն իրավունք ունի.

4.1.Ընտրել և ընտրվել ՄՀԿ ու նրա տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում /այդ թվում՝ տվյալ մարմինների պատվիրակ, նախագահ, ղեկավար, քարտուղար կամ անդամ/:

4.2.Ընդգրկվել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուներ առաջադրելու մասին ցուցակում, ինչպես նաև առաջադրվել թեկնածու՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովի, քաղաքական կամ քաղաքացիական նշանակովի պաշտոններում ընտրվելու /նշանակվելու/ նպատակով:

4.3.Տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ ՄՀԿ կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը:

4.4.Սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով բողոքարկել նշված մարմինների որոշումներն ու գործողությունները:

4.5.Հարց բարձրացնել, հայտնել իր կարծիքը քննարկվող խնդիրների վերաբերյալ, հրապարակայնորեն արտահայտել իր տեսակետը, ինչպես նաև ՄՀԿ ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնբողոքել հասարակական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ:

4.6.Մասնակցել կուսակցության միջոցառումներին, կուսակցության ժողովներում և նրա նիստերում հանդես գալ առաջարկություններով և հայտարարություններով:

4.7.Տեղեկատվություն ստանալ ՄՀԿ ընտրովի մարմինների գործունեության մասին:

4.8.Իր դիմումի համաձայն դուրս գալ կուսակցությունից:

4.9. Ներկա լինել կուսակցության համագումարի նիստերին:

4.10.Ծանոթանալ կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալ դրանց ընդունած որոշումների պատճենները:

4.11.Բողոքարկել կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները:

4.12.Եռամսյակը մեկ իր ցանկությամբ մուծել անդամավճար:

4.13.Օգտվել սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

5.ՄՀԿ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՀԿ անդամը պարտավոր է.

5.1.Քննարկել և կատարել ՄՀԿ համագումարի, կուսակցության վերադաս մարմինների որոշումները:

5.2.Մասնակցել կուսակցության քաղաքականության և ծրագրերի իրականացմանը:

5.3.Իր վարքագծով և գործունեությամբ չարատավորել կուսակցությունը, քարոզչություն կամ այլ գործունեություն չծավալել ՄՀԿ գաղափարական սկզբունքների դեմ:

5.4.Գործել կուսակցության որևէ կառուցվածքային ստորաբաժանումում:

5.5.Իր կանոնադրական պարտականությունները անբավարար կամ ոչ լիարժեք կատարելու դեպքում ՄՀԿ անդամը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

5.6.Կուսակցության անդամների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները, դրանց կիրառման հիմքերն ու կարգը, դրանք կիրառող ՄՀԿ իրավասու մարմինները սահմանվում են ՄՀԿ վարչության նիստում:

5.7.Աժ ընտրությունների, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների ընտրություններին ՄՀԿ ընտրական ցուցակները 01.01.2021 թվականից ձևավորվում են կուսակցության վարչության ներկայացմամբ՝ կուսակցության անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների առաջարկություններով և հաստատված ՄՀԿ համագումարի կամ նրա հրավիրման անհնարինության դեպքում՝ ՄՀԿ քաղաքական խորհրդի կողմից:

6. ՄՀԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1.ՄՀԿ իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- կանոնադրական նպատակներին ու խնդիրներին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ, ներկայացուցչություններ, ինչպես նաև կազմալուծել դրանք,
- կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ ու այլ հասարակական, քաղաքական միջոցառումներ,
- ազատորեն տեղեկություններ տարածել իր գործունեության վերաբերյալ, քարոզել իր նպատակները և խնդիրները,

- մասնակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը,
- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրական գործընթացում հավասար և ոչ խտրական պայմաններով օգտվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվական միջոցներից,
- հասարակական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ հանդես գալ նախաձեռնություններով, առաջարկներ ներկայացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ցանկացած հարցով,
- հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ ու հրատարակչություններ,
- այլ կուսակցությունների հետ, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ստեղծել դաշինքներ /միավորումներ/,
- հաստատել և պահպանել միջազգային կապեր ու շփումներ օտարերկրյա կուսակցությունների և հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, կնքելու համագործակցության մասին համաձայնագրեր, անդամակցել միջազգային միություններին ու ասոցիացիաներին,
- տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները,
- իրականացնել օրենքով չարգելված և սույն կանոնադրությանը համապատասխանող այլ գործունեություն:

6.2.ՄՀԿ, որպես կուսակցություն, քաղաքական միավորում է, որն իրավունք ունի թեկնածուներ առաջադրել Ազգային Ժողովի պատգամավորների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ավագանու ընտրություններում:

6.3.ՄՀԿ պարտավոր է.

- Պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, ինչպես նաև իր կանոնադրությունը, ծրագիրը և որոշումները,
- յուրաքանչյուր տարի ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http: www.azdarar.am, հրապարակել կուսակցության գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով դրա կազմավորման աբյուրները:

6.4.Կուսակցությունը չի կարող լինել առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

6.5.ՀՀ կողմից երաշխավորվում է ընդդիմադիր գործունեություն իրականացնելու ազատություն, այդ թվում՝

1/ հրապարակայնորեն ներկայացնել իր դիրքորոշումը պետական և հասարակական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ,

2/ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց ներկայացնել անհատական և սուբյեկտիվ հանրագրեր, որոնք համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կարգով ենթակա են քննարկման:

6.6.Ընտրություններին մասնակցելիս ՄՀԿ-ն ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո հինգ օրվա ընթացքում Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում կուսակցության (կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:

6.7.Կուսակցությունը համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի կարող է ստանալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից աջակցություն:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով սահմանված կարգով բոլոր կուսակցություններին հավասար և ոչ խտրական պայմաններով ցուցաբերում են հետևյալ աջակցությունը.

1) ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հիմնադրված զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու հնարավորությունը.

2) կուսակցություններին տրամադրում են իրենց պատկանող շինություններ, կապի միջոցներ, որոնցից օգտվելու առաջնահերթ իրավունք ունեն Ազգային ժողովի ընտրություններում մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցությունները.

3) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին ու նրանց տարածքային ստորաբաժանումներին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ապահովում են համապատասխան հնարավորություններով:

2. Պետական մարմինները «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով ֆինանսավորում են կուսակցությունների գործունեությունը:

7.ՄՀԿ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

7.1.Կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են.

ա/ կուսակցության սկզբնական կազմակերպությունը,

բ/ կուսակցության համայնքային կազմակերպությունը,

գ/ կուսակցության տարածքային կազմակերպությունը,

դ/ կուսակցության մարզային կազմակերպությունը:

Կուսակցության կառուցվածքային հիմքը սկզբնական կազմակերպություններն են:

Սկզբնական կազմակերպությունը ստեղծվում է վարչատարածքային և նպատակային կարգով:

ՄՀԿ սկզբնական կազմակերպություններ կարող են ստեղծել.

- սկզբնական կազմակերպության կազմակերպական հանձնաժողովը,
- կուսակցության համայնքային խորհուրդը,
- կուսակցության տարածքային խորհուրդը,
- կուսակցության մարզային խորհուրդը:

7.2.Սկզբնական կազմակերպության բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, որը հրավիրվում է առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Կազմակերպության ժողովը իրավազոր է, եթե մասնակցում է կազմակերպության անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ: Փակ քվեարկությունն անցկացվում է մասնակիցների 1/3-ի պահանջով:

7.3.Ժողովն իրավասու է.

- ընդունել որոշումներ համայնքի, տարածքի մասշտաբով միջոցառումներ իրականացնելու նպատակով,
- հայտնել կարծիքներ և առաջարկություններ վերադաս կազմակերպությունների որոշումների, գործունեության վերաբերյալ,
- ընտրել սկզբնական կազմակերպության նախագահ և փոխնախագահ չորս տարի ժամկետով, ովքեր համապատասխանաբար հաստատվում են կուսակցության մարզային խորհրդի կողմից,
- ընտրել սկզբնական կազմակերպության խորհուրդ չորս տարի ժամկետով,
- հաստատել խորհրդի նիստերի ժամանակացույցը,
- ընտրել տարածքային, մարզային կոնֆերանսների և կուսակցության համագումարի պատվիրակներ,
- հաստատել կուսակցության նոր անդամների ընդունելության կամ հեռացման մասին խորհրդի որոշումը,
- հաստատել խորհրդի աշխատանքային ծրագրերը,
- կուսակցության ղեկավար մարմիններում պատվիրակել իր ներկայացուցչին, հետ կանչել նրան կամ փոխարինել մեկ ուրիշով,
- սկզբնական կազմակերպության ժողովի որոշումը պարտադիր է բոլոր սկզբնական կազմակերպության անդամների համար և այն կարող է բողոքարկվել վերադաս մարմնին,

- սկզբնական կազմակերպության ընթացիկ ղեկավարումը ժողովների միջև եղած ժամանակահատվածում կատարվում է նախագահի կամ նրա հանձնարարությամբ՝ փոխնախագահի կողմից, /եթե խորհուրդ չի ընտրված/,
- սկզբնական կազմակերպության անդամների հիմնադիր կամ հաշվետու-վերընտրական ժողովն ընտրում է կազմակերպության նախագահ և փոխնախագահ չորս տարի ժամկետով, տասից և ավելի անդամների դեպքում նաև խորհուրդ չորս տարի ժամկետով, որի թվական կազմը սահմանում է ընդհանուր ժողովը:

7.4.Խորհուրդը.

- խորհրդի նիստերը տեղի են ունենում ամիսը երկու անգամ: Նիստն իրավազոր է, եթե նրան մասնակցում են անդամների առնվազն կեսը, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի արտահերթ նիստը տեղի է ունենում նախագահի նախաձեռնությամբ և կազմակերպության մյուս անդամների 1/3-ի պահանջով,
- լսում է նախագահի և կազմակերպության մյուս անդամների հաշվետվությունը կատարած ընթացիկ աշխատանքների մասին, անհրաժեշտության դեպքում որոշում կայացնում հարցը քննարկելու կազմակերպության ժողովում,
- ընդունում է առանձին միջոցառումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- հաստատում է ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը, անցկացման տեղն ու ժամկետը,
- ընդունում է առանձին միջոցառումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- կատարում է ընթացիկ այլ աշխատանքներ:

.1. Նախագահը.

- պատասխանատու է կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման համար,
- կազմակերպում է միջոցառումներ համայնքի, տարածքի մասշտաբով,
- հետևում է կազմակերպության առանձին անդամներին տրված հանձնարարությունների կատարմանը,
- խորհրդին հաշվետվություն է տալիս ընթացիկ աշխատանքների վերաբերյալ,
- խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում, մասնակցում է համայնքային և տարածքային կազմակերպության և մարզային խորհրդի աշխատանքներին:

7.5.Փոխնախագահը.

- փոխարինում է նախագահին նրա բացակայության դեպքում,
- նախագահի հանձնարարությամբ իրականացնում է որոշակի աշխատանքներ և պատասխանատվություն է կրում դրանց կատարման համար:

7.6.Սկզբնական կազմակերպության ժողովը բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, չորս տարի ժամանակով ընտրում է նախագահ կամ համանախագահներ և տեղակալներ: Սկզբնական կազմակերպության ժողովի որոշմամբ կարող են անցկացվել նախագահի կամ համանախագահների և տեղակալների վաղաժամկետ ընտրություններ՝ վերադաս մարմնի համաձայնությամբ:

7.7.Սկզբնական կազմակերպությունը ենթակա է տարածքային /համայնքային/ կազմակերպությանը՝ տարածքային /համայնքային/ խորհրդին, որն իր կողմից ընտրված հանձնաժողովի միջոցով 4 տարի ժամկետով վերահսկողություն է սահմանում սկզբնական կազմակերպության նկատմամբ:

7.8.Սկզբնական կազմակերպության նախագահը տարին մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում հաջորդ տարվա հունվար ամսվա ընթացքում:

Այն սկզբնական կազմակերպությունը, որի նախագահն ընտրվել է տարածքային /համայնքային/ խորհրդի նախագահ կամ համանախագահ, ընտրում է նոր նախագահ կամ համանախագահներ:Կուսակցության հերթական համագումարից հետո, 10 օրվա ընթացքում սկզբնական կազմակերպությունն անցկացնում է նախագահի կամ համանախագահի և տեղակալի նոր ընտրություններ:

7.9.Սկզբնական կազմակերպությունն իր միջոցները ձեռք է բերում անդամավճարներից, նվիրատվություններից և փոխանցում կուսակցության տարածքային /համայնքային/ խորհրդին:

7.10.Սկզբնական կազմակերպության գործունեության հետ կապված ֆինանսական, տարածքային, կապի, նյութական օժանդակության հարցերը կազմակերպում են նախագահը, տեղակալները՝ կուսակցության անդամների հետ համատեղ:

7.11.Սկզբնական կազմակերպության ղեկավարները՝ նախագահները, համանախագահները, տեղակալները ներկայացվում են հաստատման՝ համապատասխան վերադաս մարմին:

7.12.Նշված կառույցների ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ պարտադիր է վերադաս մարմինների ներկայությունը:

8. ՄՀԿ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ /ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ/ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

8.1.Տարածքային /համայնքային/ կազմակերպություններ են ստեղծվում մարզերի ենթաշրջաններում և Երևան քաղաքի վարչական շրջաններում: Սկզբնական կազմակերպության նախագահն ի պաշտոնե տարածքային կազմակերպության խորհրդի անդամ է:

8.2.Կուսակցության տարածքային /համայնքային/ խորհրդի նախագահը կամ համանախագահները և տեղակալները ընտրվում են կուսակցության տարածքային

խորհրդի նիստում՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամանակով: Տարածքային /համայնքային/ խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել տարածքային /համայնքային/ խորհրդի նախագահի կամ համանախագահի և տեղակալի վաղաժամկետ ընտրություն: Տարածքային /համայնքային/ այն կազմակերպությունը, որի նախագահը կամ համանախագահը ընտրվում է մարզային խորհրդի նախագահ կամ համանախագահ, ընտրում է նոր նախագահ կամ համանախագահ: Կուսակցության հերթական համագումարից հետո՝ 20 օրվա ընթացքում, անցկացվում է տարածքային /համայնքային/ խորհրդի նախագահի ընտրություն:

8.3.Կուսակցության տարածքային /համայնքային/ խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Նիստը իրավազոր է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ: Փակ քվեարկությունն անցկացվում է մասնակիցների 1/3-ի պահանջով: Կուսակցության տարածքային /համայնքային/ խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է մարզային խորհրդին. հաշվետվությունը ներկայացվում է տարին մեկ անգամ՝ կազմակերպության տարածքային /համայնքային/ խորհրդի նախագահի կողմից: Կուսակցության տարածքային /համայնքային/ խորհուրդն իր միջոցները փոխանցում է մարզային խորհրդին, որի որոշմամբ այն կարող է նաև թողնվել տարածքային խորհրդի տնօրինմանը: Կուսակցության տարածքային /համայնքային/ խորհուրդը ծախսերի մասին յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն է ներկայացնում մարզային խորհրդին: Խորհուրդը՝

- լսում է նախագահի և կազմակերպության մյուս անդամների հաշվետվությունը կատարած ընթացիկ աշխատանքների մասին, անհրաժեշտության դեպքում որոշում կայացնել հարցը քննարկելու կազմակերպության ժողովում,
- ընդունում է առանձին միջոցառումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- հաստատում է ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը, անցկացման տեղն ու ժամկետը,
- ընդունում է առանձին միջոցառումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- կատարում է ընթացիկ այլ աշխատանքներ:

8.4. Տարածքային /համայնքային/ կազմակերպությունը ենթակա է մարզային կազմակերպության խորհրդին, որն իր կողմից ընտրված հանձնաժողովի միջոցով, 4 տարի ժամկետով վերահսկողություն է սահմանում տարածքային /համայնքային/ կազմակերպության նկատմամբ:

8.5. Տարածքային /համայնքային/ խորհուրդն իրավունք ունի կուսակցության սկզբնական կազմակերպությունը լուծարելու հարց բարձրացնել կուսակցության մարզային խորհրդի առջև:

8.6. Տարածքային /համայնքային/ կազմակերպությունը ձեռք բերած միջոցները՝ անդամավճարներ, նվիրատվություններ, այլ, փոխանցում է կուսակցության մարզային խորհրդին: ՄՀԿ մարզային խորհրդի որոշմամբ տարածքային /համայնքային/ կազմակերպությունը կարող է իր տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցներն օգտագործել իր կազմակերպչական գործունեության վրա՝ մարզային խորհրդին նախապես ներկայացնելով հաշվետվություն:

8.7. Տարածքային /համայնքային/ կազմակերպության գործունեության հետ կապված ֆինանսական, տարածքային, կապի, նյութական օժանդակության հարցերը կազմակերպում են նախագահը, համանախագահները, տեղակալները՝ կուսակցության անդամների հետ համատեղ:

8.8. Տարածքային /համայնքային/ կազմակերպության ղեկավարները՝ նախագահները, համանախագահները, տեղակալները ենթակայացվում են հաստատման՝ համապատասխան վերադաս մարմին:

8.9. Նշված կառույցների ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ պարտադիր է վերադաս մարմինների ներկայությունը:

8.10. Նախագահը.

- պատասխանատու է կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման համար,
- կազմակերպում է միջոցառումներ համայնքի, տարածքի մասշտաբով,
- հետևում է կազմակերպության առանձին անդամներին տրված հանձնարարությունների կատարմանը,
- խորհրդին հաշվետվություն է տալիս ընթացիկ աշխատանքների վերաբերյալ,
- խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում, մասնակցում է համայնքային և տարածքային կազմակերպության և մարզային խորհրդի աշխատանքներին:

8.11. Փոխնախագահը.

- փոխարինում է նախագահին նրա բացակայության դեպքում,
- նախագահի հանձնարարությամբ իրականացնում է որոշակի աշխատանքներ և պատասխանատվություն է կրում դրանց կատարման համար:

9. ՄՀԿ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

9.1.Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են մարզային կուսակցական կազմակերպություններ: Մարզային խորհուրդը ձևավորվում է մարզի տարածքում գործող տարածքային կազմակերպությունների նախագահների կողմից:

9.2.Կուսակցության մարզային խորհրդի նախագահը կամ համանախագահներն ու տեղակալները ընտրվում են կուսակցության մարզային խորհրդի անդամների կազմից՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, չորս տարի ժամանակով: Մարզային խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել մարզային խորհրդի նախագահի կամ համանախագահի և տեղակալի վաղաժամկետ ընտրություն: Կուսակցության հերթական համագումարից հետո, մեկ ամսվա ընթացքում, տեղի է ունենում մարզային խորհրդի նիստ, որն անցկացնում է մարզային խորհրդի նախագահի կամ համանախագահների ընտրություն:

9.3.Կուսակցության մարզային խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Նիստն իրավազոր է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Մարզային խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ: Փակ քվեարկությունն անցկացվում է մասնակիցների 1/3-ի պահանջով: Արտահերթ նիստերը հրավիրվում են նախագահի նախաձեռնությամբ կամ անդամների 1/3-ի պահանջով:

9.4.Մարզային կազմակերպությունը ենթակա է կուսակցության վարչությանը, որն իր կողմից ընտրված հանձնաժողովի միջոցով, չորս տարի ժամկետով վերահսկողություն է սահմանում մարզային կազմակերպության նկատմամբ: Մարզային խորհրդի նախագահը տարին մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում կուսակցության վարչությանը:

9.5.Կուսակցության մարզային խորհուրդը իր ֆինանսական միջոցները՝ ձեռք բերված անդամավճարներից, նվիրատվություններից, այլ, փոխանցում է կուսակցության ղեկավար մարմնին:

Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ այդ միջոցները կամ դրանց մի մասը կարող է թողնել մարզային խորհրդի տնօրինությանը, որը յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն է ներկայացնում կուսակցության խորհրդի նախագահին:

9.6.Կուսակցության մարզային խորհուրդը կարող է լուծարել կուսակցության սկզբնական կազմակերպությունը՝ իր նախաձեռնությամբ կամ տարածքային կազմակերպության առաջարկով: Մարզային խորհուրդը տարածքային կազմակերպության լուծարման հարցը ներկայացնում է կուսակցության քաղաքական խորհրդի քննարկմանը:

9.7. Մարզային կազմակերպության ղեկավար մարմինը կոնֆերանսն է, որն անց է կացվում ոչ պակաս քան չորս տարին մեկ անգամ: Կոնֆերանսի պատվիրակների թիվը որոշվում է մարզային խորհրդի կողմից:

Կոնֆերանսը իրավազոր է, եթե ներկա են պատվիրակների 2/3-ը, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.8. Կոնֆերանսը՝

- ընտրում է մարզային խորհուրդ չորս տարի ժամկետով,
- լսում է մարզային խորհրդի հաշվետվությունը,
- լսում է առանձին համայնքային, տարածքային կազմակերպությունների նախագահների հաշվետվությունները,
- ընդունում է գործունեության ծրագրեր մարզի մասշտաբով,
- քննարկում է իր իրավասության այլ հարցեր:

10.ՄՀԿ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

10.1.ՄՀԿ վարչությունը կազմավորվում է քաղաքական խորհրդի կողմից տարածքային կառուցվածքային սկզբունքով:

10.2.Կազմակերպում է համագումարի հրավիրման նախապատրաստական աշխատանքը:

10.3.Կասեցնում է տարածքային, մարզային կազմակերպությունների որոշումները, որոնք չեն համապատասխանում կուսակցության ծրագրին, կանոնադրությանը, նրա գաղափարական սկզբունքներին և քաղաքականությանը:

10.4 Տարածքային, մարզային կազմակերպություններին տեղյակ է պահում համագումարի և վարչության որոշումների և կուսակցության ընդհանուր գործունեության մասին:

10.5.Հսկողություն է իրականացնում կուսակցության լրատվական և հրատարակչական ծառայությունների գործունեության նկատմամբ:

10.6.Համակարգում է Ազգային ժողովում, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված իր անդամների աշխատանքը:

10.7.Ազգային ժողովի պատգամավոր հանդիսացող ՄՀԿ անդամը վարչության որոշմամբ կարող է ներգրավվել վարչության աշխատանքներում:

10.8.Վարչությունը հաստատում է ՄՀԿ գանձապահ:

10.9.Տարին մեկ անգամ լսում է կուսակցության մարզային խորհուրդների հաշվետվությունը:

10.10.Իրականացնում է համագումարի կողմից վերապահված այլ իրավունքներ:

11.ՄՀԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

11.1.Կուսակցության քաղաքական խորհուրդը (մշտապես գործող ղեկավար մարմինը) ընտրվում է կուսակցության համագումարում՝ չորս տարի ժամկետով: Քաղաքական խորհրդի անդամների թեկնածություններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից: Քաղաքական խորհրդի անդամների թիվը որոշում է համագումարը: Քաղաքական խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է բաց կամ փակ քվեարկությամբ: Ընտրված են համարվում համագումարի պատվիրակների առավել ձայներ ստացած թեկնածուները:

11.2.Կուսակցության քաղաքական խորհուրդը համարվում է կազմավորված՝ կուսակցության ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քաղաքական խորհրդի անդամները քաղաքական խորհրդի նիստով, բաց քվեարկությամբ ազատվում են խորհրդի անդամությունից ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ:

11.3.Քաղաքական խորհուրդը նախագահի բացակայության ժամանակ իր նիստերը վարելու, ինչպես նաև սույն կանոնադրությամբ քաղաքական խորհրդին վերապահված լիազորությունները համակարգելու համար ընտրում է քաղաքական խորհրդի նախագահի տեղակալ՝ բաց քվեարկությամբ, ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնության՝ չորս տարի ժամկետով: Նախագահի տեղակալի հերթական ընտրությունները կատարվում են քաղաքական խորհրդի նոր կազմի ընտրություններից հետո: Եթե առաջադրվել են երկու և ավել թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել ձայներ ստացածը: Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի և նախագահի տեղակալի վաղաժամկետ ընտրություն:

11.4.Քաղաքական խորհուրդը սահմանում է ՄՀԿ վարչության թվակազմը և ընտրում անդամներին: Կուսակցության քաղաքական խորհուրդը իր անդամներից ընտրում է ՄՀԿ վարչության նախագահին և տեղակալներին: Վերջիններս, որպես կանոն, պետք է լինեն սկզբնական, տարածքային կամ մարզային կազմակերպությունների նախագահները, համանախագահները կամ տեղակալները:

Ծանոթություն.

Քաղաքական խորհուրդը իրավասու է ընդունել քաղաքական խորհրդի և վարչության անդամի թեկնածու, ով կարող է մասնակցել ՄՀԿ քաղաքական խորհրդի և վարչության նիստերին, առանց ձայնի իրավունքի:

11.5.Քաղաքական խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն վեց ամիսը մեկ անգամ: Քաղաքական խորհրդի նախագահը կամ քաղաքական խորհրդի անդամների առնվազն 1/3-ը կարող են հրավիրել արտահերթ նիստ: Նիստն իրավազոր է, եթե ներկա է քաղաքական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

11.6.Կուսակցության քաղաքական խորհրդի անդամը կարող է կասեցնել իր գործունեությունը խորհրդում: Քաղաքական խորհրդի անդամի գործունեության կասեցման հարցը կարող է քննարկվել նաև կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի կամ կուսակցության քաղաքական խորհրդի անդամների առնվազն 1/3 - ի պահանջով: Որոշումն ընդունվում է նիստին ներկա խորհրդի անդամների ձայների առնվազն 2/3 - ով, բաց քվեարկությամբ: Կուսակցության քաղաքական խորհուրդն իրավազոր է, եթե առկա է նրա կազմի առնվազն 2/3 - ը:

11.7.Քաղաքական խորհուրդը կարող է կուսակցության գործունեությանը վերաբերվող կարևորագույն հարցեր քննարկելու համար հրավիրել ընդլայնված նիստեր: Ընդլայնված նիստերին մասնակցում են կուսակցության մարզային խորհուրդների անդամները, քաղաքական խորհրդի հանձնաժողովների նախագահները, ինչպես նաև քաղաքական խորհրդի որոշմամբ հրավիրված այլ անձինք: Ազգային ժողովի ընտրություններում կուսակցության պատգամավորության թեկնածուների առաջադրման համար հրավիրված ընդլայնված նիստին մասնակցում են նաև կուսակցության տարածքային և կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների նախագահները:

11.8.Կուսակցության քաղաքական խորհուրդը մշտական գործող ղեկավար մարմին է և իրականացնում է կուսակցության՝ որպես իրավաբանական անձի, լիազորությունները:

11.9.Կուսակցության քաղաքական խորհուրդը՝

1. Հրավիրում է կուսակցության հերթական կամ արտահերթ համագումար, հաստատում է պատգամավորների ներկայացուցչական նորմը: Համագումար հրավիրելու մասին որոշումն ընդունվում է նրա կայացման օրից ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Արտահերթ համագումար հրավիրելու մասին որոշում է կայացնում ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:
2. Վերահսկում է համագումարի և իր որոշումների կատարման ընթացքը:
3. Մշակում է գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերը, մարտավարական սկզբունքները, կուսակցության անունից անում է հայտարարություններ և առաջարկություններ:
4. Չեղյալ է համարում տարածքային, մարզային կազմակերպությունների որոշումները, որոնք չեն համապատասխանում կուսակցության ծրագրին, կանոնադրությանը, նրա գաղափարական սկզբունքներին և քաղաքականությանը:
5. Նշանակում և ազատում է ՄՀԿ լրատվական միջոցների ղեկավարներին:
6. Կազմում է հանձնաժողովներ և հանձնախմբեր: Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի ներկայացմամբ հաստատում է հանձնաժողովների նախագահների թեկնածությունը:

7. Իր կամ մարզային խորհրդի առաջարկությամբ լուծարում է տարածքային կազմակերպությունը:

8. Կուսակցության վարչության առաջարկությամբ լուծարում է մարզային կազմակերպությունը:

9. Հաստատում է ՀՀ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում կուսակցության կողմից առաջադրվող թեկնածուներին:

10. Հաստատում է կուսակցության նախընտրական ծրագիրը:

11. Իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները և լրացումները:

12. Հաստատում է կուսակցության տարեկան բյուջեն:

13. Կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ:

14. Տնօրինում է դրամական ու այլ միջոցները:

15. Հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվը, ծախսերը և աշխատակազմը:

16. Որոշում է կայացնում ՄՀԿ լուծարման մասին, երբ համագումարն իրավազոր չի եղել:

Կուսակցության քաղաքական խորհուրդը դադարեցնում է իր լիազորությունները՝ հերթական կամ խորհրդի ընտրության օրակարգով հրավիրված արտահերթ համագումարի սկսելու օրը:

12.ՄՀԿ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

12.1.Կուսակցության համագումարը կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինն է, որի որոշումները պարտադիր են կուսակցության կառույցների, նրա անդամների համար:

12.2.Կուսակցության հերթական համագումարները հրավիրվում են առնվազն չորս տարին մեկ անգամ՝ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի՝ քաղաքական խորհրդի կողմից: Քաղաքական խորհրդի որոշմամբ կարող է հրավիրվել արտահերթ համագումար: Հերթական համագումարի նշանակման օրից առնվազն մեկ ամիս առաջ կուսակցության քաղաքական խորհուրդը հրավիրում է ևս մեկ ընդլայնված նիստ, որտեղ ճշգրտվում է համագումարի անցկացման հետ կապված կազմակերպչական հարցերը:

12.3.Համագումարը բացում է ՄՀԿ նախագահը, և նրա առաջարկությամբ համագումարն առաջադրում է համագումարի նախագահի և քարտուղարի թեկնածություններ: Բաց քվեարկությամբ անցնում են նախագահության և քարտուղարի առավել ձայներ հավաքած թեկնածուները:

12.4.ՄՀԿ կանոնադրության և ծրագրի ընդունման, դրանց մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ղեկավար ու վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման, մշտապես գործող ղեկավար մարմնի քաղաքական խորհուրդի նախագահի ընտրության, կուսակցության վերակազմակերպման, լուծարման, ինչպես նաև կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածուի առաջադրման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

12.5.Համագումարի ձայնի իրավունքով պատվիրակների ընդհանուր թիվը որոշում է կուսակցության խորհուրդը՝ ելնելով անդամների ընդհանուր թվից: Պատվիրակներն առաջադրվում են տարածքային կազմակերպությունների ընդհանուր ժողովներում՝ սկզբնական կազմակերպությունների կողմից առաջադրված ներկայացուցիչներից: Համագումարն իրավազոր է, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն կեսի, բայց ոչ պակաս քան 100 պատվիրակի ներկայության դեպքում: Համագումարի որոշումներն ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ ընտրված պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ: Փակ քվեարկություն է անցկացվում ներկաների ձայների 1/3-ի պահանջով:

12.6.Կուսակցության համագումարը՝

- կանխորոշում է կուսակցության ռազմավարական, գաղափարա-քաղաքական ուղին, կուսակցության նպատակների կենսագործման ձևը,
- լսում և հաստատում է կուսակցության քաղաքական խորհրդի հաշվետվությունը,
- քննարկում և ընդունում է կուսակցության ծրագիրն ու հաստատում է կանոնադրությունը, դրանց մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարում, բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների.
- ընտրում է կուսակցության քաղաքական խորհուրդ, քաղաքական խորհրդի նախագահ, ով նաև կուսակցության նախագահն է,
- լսում և հաստատում է կուսակցության վերահսկիչ -վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը,
- կուսակցության գործունեության վերահսկման համար ընտրում է վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողով, որի անդամների թիվը հաստատում է համագումարը: Վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի անդամը կուսակցության խորհուրդների անդամ լինել չի կարող,
- վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի անդամներն ընտրում են հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովը հաշվետու է միայն կուսակցության համագումարին,

- որոշում է ընդունում կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին: Վերակազմակերպման հարցը համագումարի օրակարգ է մտցվում կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ,
- Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, տնօրինում է կուսակցության գույքն ու ֆինանսական միջոցները:

13. ՄՀԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՈՒԴԻՏԸ, ՄՀԿ ՎԵՐԱՀՍԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1.ՄՀԿ ֆինանսական և հաշվապահական հաշվետվություններ է ներկայացնում իրավաբանական անձանց համար նախատեսված օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

13.2.ՄՀԿ պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը և օրենքով նախատեսված դեպքերում դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, ինչպես նաև սահմանված կարգով այն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

- Կուսակցությունն իր հաշվետվությունը զանգվածային լրատվության միջոցով հրապարակելուց և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելուց հետո հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 1-ից ոչ ուշ հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն :
- Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը:
- Կուսակցության ստացած նվիրատվությունների աղբյուրը՝ անկախ արժեքից, նշվում է կուսակցության հաշվետվությունում:
- ՄՀԿ կողմից նախընտրական քարոզչության նախապատրաստման և իրականացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

13.3. Վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ:

1. Եթե կուսակցության ակտիվների արժեքը գերազանցել է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը, պարտավոր է հաշվետվությունը հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ:

2. Եթե կուսակցության ակտիվների արժեքը սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցելը պայմանավորված է եղել հաշվետու տարում կուսակցության հաշվեկշռում առկա անշարժ և շարժական գույքի արժեքով, և կուսակցությունն այդ կապակցությամբ արդեն մեկ անգամ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը ներկայացրել է աուդիտորական եզրակացություն, ապա հաջորդող հաշվետու տարիներին ազատվում է աուդիտորական եզրակացություն ներկայացնելու պարտականությունից, եթե նախորդ հաշվետու տարվա համեմատությամբ նրա հաշվեկշռում անշարժ և շարժական գույքի մասով փոփոխություններ տեղի չեն ունեցել: Կուսակցության հաշվեկշռում անշարժ և շարժական գույքի մասով փոփոխությունների դեպքում կուսակցությունը պարտավոր է հաշվետվությունը ներկայացնել «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով աուդիտորական եզրակացության հետ, եթե հաշվետու տարում իրականացրած բոլոր գործարքների գինը գերազանցել է սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:

3. Պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու դեպքում կուսակցությունը պարտավոր է հաշվետվությունը հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ, եթե պետական բյուջեից ֆինանսավորումը հաշվետու տարում գերազանցել է նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը:

13.4. ՄՀԿ վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարում՝ բաց կամ փակ քվեարկությամբ:

13.5.Հանձնաժողովի աշխատանքը ղեկավարում է վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, որն ընտրվում է հանձնաժողովի նիստում՝ բաց կամ փակ քվեարկությամբ, և մասնակցում է վարչության նիստերին:

13.6.Կուսակցության վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի նախագահը հաշվետու է համագումարին:

12.7.Անհրաժեշտության դեպքում վարչությանը կամ քաղաքական խորհրդին տեղյակ է պահում իր գործունեության մասին:

12.8.Մարզային կառույցներում ընտրված վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովները համարվում են ՄՀԿ վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի ստորադաս կառույցներ, որոնք պարբերաբար ներկայացնում են տեղեկություններ իրենց գործունեության մասին և հաշվետու են համապատասխան մարզային մարմիններին:

14. ՄՀԿ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

14.1.ՄՀԿ գույքը գոյանում է.

- կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից /մուտքի վճարներից/, անդամավճարներից,
- նվիրատվություններից,
- սահմանված կարգով իրականացված գործունեությունից ստացված եկամուտներից,
- օրենքով սահմանված բյուջետային ֆինանսավորումից:

Ծանոթություն 1.

ՄՀԿ իրավունք ունի գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ վարկերի, փոխառությունների, երրորդ անձանց կողմից կուսակցության պարտքի մարման տեսքով նվիրատվություններ ստանալ ֆիզիկական անձանցից, հասարակական միավորումներից և հիմնադրամներից, իրավաբանական այլ անձանցից, բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 24 - րդ հոդվածի 4 - րդ մասով նախատեսված դեպքերի, ովքեր պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը, իսկ իրավաբանական անձինք՝ իրավաբանական անձանց միջև անկանխիկ հաշվարկի կանոններով պահանջվող բոլոր տեղեկությունները /ռեկվիզիտները/:

Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է:

Ծանոթություն 2.

ՄՀԿ նվիրատվություններ չի ընդունում.

1. Բարեգործական և կրոնական կազմակերպություններից, ինչպես նաև դրանց մասնակցությամբ կազմակերպություններից:
2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, բացառությամբ այդ մարմինների կողմից «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 26 - րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման:
3. Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից:
4. Օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաև օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, փայը, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական /բաժնեհավաք, փայահավաք/ կապիտալում 30 տոկոսից ավելի է:
5. Միջազգային կազմակերպություններից:
6. Անանուն և քաղաքացիություն չունեցող անձանցից:

14.2.Կուսակցությանը տրվող նվիրատվության, կուսակցության համար կատարված աշխատանքների ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ կամ այդ չափը գերազանցող նվիրատվության շարժը կամ չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում ՄՀԿ ղեկավարվում է «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 24 - րդ հոդվածի 5 - րդ և 6 - րդ կետերով:

14.3. Սեփականության կամ այլ գույքային իրավունքով ծրագրային նպատակների և կանոնադրական խնդիրների իրականացման համար կուսակցությանը կարող են պատկանել անհրաժեշտ ցանկացած գույք, այդ թվում՝ շինություններ, դրամական, փոխադրական միջոցներ:

14.4. ՄՀԿ կողմից ստացված, ինչպես նաև նրա սեփական միջոցների հաշվին ստեղծված և /կամ/ ձեռք բերված գույքի սեփականատերը կուսակցությունն է: Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի կամ դրա մասի նկատմամբ և պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար: Կուսակցությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պատավորությունների համար:

14.5. ՄՀԿ տարածքային ստորաբաժանումները սեփականատիրոջ կողմից իրենց հատկացված գույքը տիրապետում և օգտագործում են կուսակցության կանոնադրությամբ նախատեսված սահմաններում և կարգով:

14.6. Կուսակցության գույքը և դրամական միջոցները տնօրինում են կուսակցության քաղաքական խորհուրդը և մարզային կազմակերպությունների խորհուրդները՝ ըստ կուսակցության քաղաքական խորհրդի կողմից հաստատված նախահաշվի:

14.7. ՄՀԿ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը չի կարող գերազանցել տարեկան նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

14.8. Կուսակցությանը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի դրամական հատկացումները կատարվում են անկանխիկ:

15. ՄՀԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ

15.1.ՄՀԿ իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից, ունի նարնջագույն, ծոպավոր դրոշ՝ վերին ձախ անկյունում պատկերված կուսակցության խորհրդանիշով, կնիք՝ կուսակցության խորհրդանիշով, իր անվանումով դրոշմ, խորհրդանիշ, լրատվամիջոցներ, հաշվարկային և ընթացիկ հաշիվներ:

15.2.ՄՀԿ խորհրդանիշն ընդգրկում է արարատյան /ուրարտական/ առյուծի, ծագող արևի, կայունություն խորհրդանշող սյան և տերևի ու բուրգի՝ որպես վերածննդի խորհրդանիշի պատկերները՝ ամփոփելով հայկական ճարտարապետական կառուցողական տարր հանդիսացող կամարը, «Միավորված հայեր կուսակցություն» անվանումը ամբողջությամբ և «Հայե՛ր, միացեք» կարգախոսը /տես՝ հավելվածը/:

16. ՄՀԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԱՐԳԵԼՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ՄՀԿ գործունեության կասեցումը և արգելումը կատարվում է «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 31 և 32-րդ հոդվածներին համապատասխան:

16.1.Կուսակցության վերակազմակերպումը կարող է կատարվել կուսակցության համագումարի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կուսակցությունը կարող է վերակազմակերպվել /միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ/ այլ կուսակցության /կուսակցությունների/:

16.2.Կուսակցության վերակազմակերպման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ կուսակցության քաղաքական խորհուրդը կամ կուսակցության համագումարի պատվիրակների առնվազն 1/3-ը՝ գրավոր առաջարկով:

16.3. Կուսակցության վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է կուսակցության ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

16.4. Համագումարի կողմից կուսակցության վերակազմակերպման մասին որոշում ընդունելու դեպքում ստեղծվում է ժամանակավոր հանձնաժողով, որն իրականացնում է կուսակցության վերակազմակերպման հետ կապված և համագումարի որոշմամբ նախատեսված աշխատանքները:

16.5.ՄՀԿ գործունեությունը դադարեցվում է լուծարման միջոցով ՄՀԿ համագումարի որոշմամբ, ընտրված պատվիրակների ձայների մեծամասնությամբ՝ 16.12.2016թ. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, տնօրինում է կուսակցության գույքն ու ֆինանսական միջոցները:

16.6. ՄՀԿ ենթակա է լուծարման, օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

16.7. ՄՀԿ ենթակա է լուծարման Սահմանադրական դատարանի որոշմամբ՝ կուսակցության գործունեության արգելման դեպքում:

16.8. Կուսակցության գործունեության արգելումը հիմք չէ ՄՀԿ առաջադրմամբ ընտրված պատգամավորների, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու համար:

16.9. Կուսակցության լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե: . «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում կուսակցության լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

16.10. Եթե կուսակցության լուծարման համար հրավիրված համագումարն իրավազոր չէ, ապա կուսակցության լուծարման մասին որոշումն ընդունում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը: Իսկ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազոր չլինելու դեպքում կուսակցությունը լուծարվում է կուսակցության հիմնադիրներից մեկի որոշմամբ: Այս դեպքում կուսակցության լուծարման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշումը կայացնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կուսակցության համագումարը կամ մշտապես գործող ղեկավար մարմինը այլ որոշում չի կայացրել:

16.11. Եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվել է կուսակցության գործունեությունը, ապա կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց: Այս դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն իրականացնում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից ստեղծված հանձնաժողովը:

17.ՄՀԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

17.1.ՄՀԿ իրավաբանական հասցեն է՝ 0014, Երևան, Հ.Ա.Թ.,Բ-2, ճառագայթային, "Բ"շ., 35 բն., հեռախոս՝ /010/ 737-902, /091/ 40-76-02, /099/ 62-81-43, /098/ 411-422:

17.2 Պաշտոնական կայք-էջեր՝

- www.mhk.am,
- www.mhktert.am,

e-mail: mr.avagyanruben@mail.ru